ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԵՊՀ պրոռեկտոր
Բաբխուդարյան

# Կ Ա Ր Ծ Ի Ք

## Անուշ Ավետիքի Հարությունյանի «Ադրբեջանի Ժողովրդական ու Խորհրդային Հանրապետությունների ստեղծումը և ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.»

## Է.00.02. «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի 2023 թ. դեկտեմբերի 6-ի նիստում (արձանագրություն թիվ 4): Նիստին մասնակցում էին Է. Զոհրաբյանը, Ա. Դարբինյանը, Ք. Կուտիկյանը, Հ. Ալեքսանյանը, Հ. Միսոյանը, Ք. Մելքոնյանը, Դ. Ավինյանը, Ա. Տետևյանը, Ա. Դարբինյանը, Լ. Մելիքյանը և Ա. Արեյանը:

Ատենախոսությունը նվիրված է վերջին 100 տարիների ընթացքում պետականության ու էթնոազգային արժասոների փնտրտուքում և դրա բյուրեղացման գործընթացում գտնվող Հարավային Կովկասի այլոց ազգային արժեքների մշակութակուլ Ադրբեջանական Հանրապետության նմանանարովանդակ խորքային պատմական գործընթացների իմաստավորմանը: Թեման չափազանց արդիական և հրատապ է, հատկապես Ադրբեջանի կողմից կեղծ գիտական շահարկումների և դրանք իր ազդեսիվ քաղաքականության արդարացմանը ծառայեցնելու համատեքստում:

Աշխատանքի նորույթը այն է, որ խորագնա ուսումնասիրությամբ մատնանշվել է նախադրյալների այն համախումբը, որոնք նպաստեցին հետագայում թուրքախոս մահմեդականների էթնոհամախմբմանը և էթնոսի ձևավորմանը: Այդ համատեքստում

հատկապես հատկանշվում է թուրքական ռազմաքաղաքական վերնախավի հեռահար ծրագիրը՝ երկրամասի հետ պատմական որևէ առնչություն չունեցող «Ադրբեջան» պետության ստեղծումը: Հատկապես կարևոր են ատենախոսի կողմից շրջանառության մեջ դրած ռուսաստանյան արխիվային փաստաթղթերը, որոնք վերաբերում են 1920-ական թթ. Ադրբեջանում հակախորհրդային շարժումների և դրանց թուրքամետ գաղափարների ուսումնասիրությանը՝ որոնք լույս են սփռում այդպես 1930-ական թթ. խորհրդային իշխանության առաջ քաշած խնդրին հասնել Ադրբեջանում թյուրքական ինքնության այլացման (ադրբեջանականացման):

Աշխատանքը շարադրված է տրամաբանորեն և ունի հստակ կառուցվածք: Այն բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթաբաժինների, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունը պատկերացում է տալիս ատենախոսության գիտական հարցադրումների և մի շարք հայեցակարգային կարևոր տեսակետների մասին: Դրանում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, լուսաբանվում են նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հիմքը, գիտական և կիրառական նշանակությունը, տրվում են աշխատանքի կառուցվածքը և օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլխում հեղինակն անդրադարձել է Այսրկովկասի արևելյան հատվածում թյուրքալեզու մահմեդական բնակչության էթնիկ համախմբումները այդ թվում՝ դրա նախադրյալներին, Ռուսական կայսրության գործոնին, հայ-թաթարական բախումներին, մահմեդականների էթնիկ ինքնության վերարժևորումներին, քաղաքական հոսանքներին և դրանց գաղափարական առանձնահատկությունների ձևավորմանը:

Երկրորդ գլխում ատենախոսը, ի թիվս այլնի, հնարավորինս հանգամանորեն, հարազատ մնալով պատմողականությանը ներկայացնում է Ադրբեջանի ժողովրդական հանրապետության ձևավորումը, ինչպես նաև իրավամբ մերկացնում է այդ պետության անվանման կեղծ քաղաքացիտական դիսկուրսն ու շահարկումները:

Երրորդ գլխում խոսվում է Ադրբեջանական Հանրապետության սոցիալիստական շրջանի 1920–1930-ական թթ. պատմաքաղաքական առանձնահատկությունների մասին:

Չորրորդ գլուխը հեղինակը նվիրել է 1920–1930-ական թթ. ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացին, ինչպես նաև իշխանությունների ազգային քաղաքականությանը:

Աշխատանքը ավարտվում է եզրակացություններով, որում հեղինակին հաջողվել է համախմբել և սինթեզել նոր համակարգված գիտելիք:

Հեղինակը ներկայացրել է հիմնավոր և համակողմանի ուսումնասիրություն, որն էապես տարբերվում է թեմային նվիրված նմանօրինակ աշխատություններից: Առաջին հերթին այն տարբերվում է իր համակողմանիությամբ, հարցերի լայն շրջանակների ընդգրկմամբ, վերլուծության խորությամբ: Երկրորդ էական տարբերությունը աղբյուրների և գրականության լայն բազան է, ինչպես նաև դրանց բազմազանությունը, այդ թվում նաև թուրքերեն և ադրբեջաներեն նյութերի առատությունը: Հետաքրքրական է, որ հեղինակը վերլուծել է ադրբեջանական էթնոսի կազմավորման գործընթացը սրնմտյան և խորհրդային տեսական մտքի ուսումնասիրությունների համադրման հիման վրա:

Ատենախոսությունում հստակ պահպանված է առաջադրված խնդիրների, բուն տեքստում դրանց լուծումների և տեքստից բխող եզրակացությունների գիտաչափորոշչային կապը: Աշխատանքը շարադրված է գիտական բարեխղճությամբ և գիտահմատավորման կանոնների պահպանմամբ: Ատենախոսը հետել է երեույթների ուսումնասիրման պատմահամեմատական և միջառարկայական վերլուծական հնարների, որի շնորհիվ ասելիքը ստացվել է ամբողջական և համակարգված:

Աշխատանքը ունի ոչ միայն գիտական, այլև բարոյական կիրառական նշանակություն: Այն կարող է օգտակար լինել ինչպես Ադրբեջանի նոր և նորագույն պատմության խնդիրներին նվիրված ուսումնասիրությունների, բուհերի դասախոսների և ուսանողների համար, այնպես էլ ՀՀ արտաքին և անվտանգային հարցերի քննարկումների ընթացքում:

Կատարվել է ծավալուն և մեծ կարևորություն ունեցող աշխատանք, սակայն ունենք նաև որոշ դիտողություններ և ցանկություններ, որոնցից հիշատակելի են հետևյալները.

1. Բարձր գնահատելով ներկայացված ատենախոսության գիտական արժեքը կարծում ենք, որ վերնագրում ավելի ճիշտ կլիներ 1920 թ. փոխարեն նշել 1918 թ., քանի որ աշխատանքում դիտարկվում է Ադրբեջանի ժողովրդական հանրապետության տարիներին տեղ գտած գործընթացները: Հետևաբար այստեղ առկա է որոշ անհամապատասխանություն:
2. Որոշակի վերապահումով կարելի է մոտենալ վերնագրին: Նման ձևակերպմամբ վերնագիրը բավականին տարողունակ է՝ բաղկացած է երեք հիմնախնդիրներից: Մեր կարծիքով ցանկալի կլիներ աշխատանքը

վերնագրել «Ադրբեջանի ժողովրդական և խորհրդային հանրապետությունների տարիներին «ադրբեջանցի» էթնոսի ձևավորման գործընթացը (1918-1930-ական թթ.)»:

3. Միևնույն ժամանակ, թեև հեղինակը օգտագործել է մամուլում հրատարակված նյութեր, սակայն դրանք առավելապես 1918-1920 թթ. հրապարակումներ են: Ցանկալի էր անդրադառնալ նաև 1920-1930-ական թթ. խորհրդային ադրբեջանական մամուլի հրապարակումներին, այդ թվում նաև հայերեն լեզվով հրատարակվող «Կոմունիստ» թերթի թեմային նվիրված նյութերին:

4. Ատենախոսության որոշ տեղերում նկատելի են ոճական և տեխնիկական անհարթություններ, որոնք ամենևին չեն ստվերում բովանդակությանը:

Որոշեցին – ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից, գտնում է.

ա) Անուշ Ավետիքի Հարությունյանի «Ադրբեջանի Ժողովրդական ու Խորհրդային Հանրապետությունների ստեղծումը և ադրբեջանցի էթեոսի կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.» ատենախոսությունը հաջողված և մեծ կարևորություն ունեցող ուսումնասիրություն է:

բ) Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է 00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐՈՒՀ, Պ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ Է. Լ. ՋՈՒՐԱԲՅԱՆ

Պատմ. գիտ. թեկնածու դոցենտ Է. Լ. Ջուրաբյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

14.12.2023 թ.